ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«6» մարտի 2020 թվականի N: 97-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ N:19 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի դատախազի 2020 թվականի փետրվարի 25-ի N:64/85(2.3)դ-20 և 2020 թվականի փետրվարի 28-ի N:64/85(4.5)դ-20 գրությունները, անհիմն համարելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N :19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանի 2020 թվականի մարտի 3–ին և 2020 թվականի փետրվարի 28-ին տրված բացատրությունները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու N:19 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մեսրոպյանին 2020 թվականի մարտի 9–ից ազատել զբաղեցրած պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2017 թվականի փետրվարի 1-ին կնքված N:18 աշխատանքային պայմանագիրը:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝